ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԷՄՄԱ ԹՈՒՆՅԱՆԻ, ՍԱՇԻԿ, ԳԵՎՈՐԳ ԵՎ ՄԻՀՐԱՆ ՍԱՖՅԱՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Էմմա Թունյանի, Սաշիկ, Գևորգ և Միհրան Սաֆյանների դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Էմմա Թունյանի, Սաշիկ, Գևորգ և Միհրան Սաֆյանների դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020թ. սեպտեմբերի 28-ին:

Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումով՝ մասնավորապես, խնդրել է.

« …

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին, 60-րդ հոդվածի 1-ին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական դատավարության» օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասը, 9-րդ հոդվածի մասի 5-րդ մասը …»:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի սահմանադրականության վերաբերյալ իրենց դիրքորոշումը դիմողները հիմնավորում են նրանով, որ վերջիններս ակնհայտորեն չեն բավարարում իրավական որոշակիության պահանջները, քանի որ դատարանները դրանք ընկալում են այնպես, որ

կարելի է դատական ակտով նախատեսել իրավական հետևանք՝ առանց վկայակոչելու այն իրավական ակտի դրույթը, որով սահմանված է անհատականացման, կոնկրետացման ենթակա իրավական հետևանքը:

Ընդ որում, որպես ենթադրյալ իրավական անորոշության միակ հիմնավորում՝ դիմողներն արձանագրում են, որ դատական ակտերով դատարանները նախատեսել են իրավական հետևանք՝ առանց վկայակոչելու իրավադրույթի վավերապայմանները, մասնավորապես, մեջբերելով վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԿԴ/5196/02/15 քաղաքացիական գործով հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «Նշված փաստերի համադրման արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ հայցվորները, օտարված գույքի դիմաց փոխհատուցման պահանջ ներկայացնելով, ըստ էության, կրկին ներկայացրել են պահանջ, ինչի վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած, ի կատար ածված դատական ակտ՝ անտեսելով վերջինիս պարտադիր բնույթը»:

3. Դատական ակտի պատճառաբանվածության առնչությամբ պատասխանողը, վկայակոչելով նշված հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածը, գտնում է, որ օրենսդիրը, որպես դատական ակտի պատճառաբանվածության երաշխիք, ի թիվս այլ պահանջների, սահմանել է նաև իրավական հիմնավորում ներկայացնելու, այն է՝ իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման պահանջը, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Միաժամանակ, պատասխանողը նկատում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (հոդվածներ 191, 200, 381, 382, 406) սահմանում է առանձին դատական ակտերի բովանդակությանը վերաբերող չափանիշներ: Այդ կապակցությամբ պատասխանողը եզրահանգում է, որ դատական ակտերում կիրառման ենթակա նորմատիվ ակտերի շարադրման պահանջը ոչ միայն ուղղակիորեն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի բովանդակությունից, այլև այդպիսի պա-

հանջն ուղղակիորեն նախատեսված է նաև առանձին դատական ակտերի բովանդակությանը ներկայացվող պահանջների շարքում: Ուստի, ըստ պատասխանողի՝ օրենսդիրը նախատեսել է հնարավոր բոլոր երաշխիքները՝ պատճառաբանված դատական ակտ կայացնելու համար՝ սահմանելով իրավական հիմքի՝ տվյալ գործով կիրառման ենթակա նորմերի շարադրման պահանջ:

Իրավական որոշակիության հարցի առնչությամբ վկայակոչելով Սահմանադրական դատարանի վերաբերելի իրավական դիրքորոշումները՝ պատասխանողն արձանագրում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում:

Ամփոփելով պատասխանողը գտնում է, որ վիճարկվող նորմերը բավարար չափով որոշակի են և չեն հակասում Սահմանադրության՝ իրավական որոշակիության սկզբունքն ամրագրող նորմերին:

4. Ելնելով դիմումի և դրան կից փաստաթղթերի, մասնավորապես, դիմողի նկատմամբ կայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ ***1) գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:***

Նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է. ***«Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝ 1) եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին»:***

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են.

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, և

գ) վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննարկվող դեպքում դիմողը, վիճարկելով խնդրո առարկա դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը, իրականում դիմումով առաջադրում է տվյալ դրույթների կիրառման իրավաչափության հարցեր:

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ և հետագա մի շարք այլ որոշումներով (13.11.2012թ. ՍԴԱՈ-80, 08.04.2014թ. ՍԴԱՈ-13, 07.04.2015թ. ՍԴԱՈ-19, ինչպես նաև 05.02.2016թ. ՍԴԴԿՈ/1-4, 18.02.2016թ. ՍԴԴԿՈ/1-5, 21.03.2016թ. ՍԴԴԿՈ/1-9, 02.04.2016թ. ՍԴԴԿՈ/1-13 և այլն) վերահաստատված իրավական դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ ***«... բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց ..., ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ***»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նորմատիվ իրավական ակտի սահմանադրական կոնկրետ վերահսկողության համար վերոհիշյալ պարտադիր նախապայմանի ամրագրմամբ, ի թիվս այլնի, նպատակ է դրվել Սահմանադրական դատարանում քննության առարկա դարձնել ենթադրյալ սահմանադրականության այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են ոչ թե կոնկրետ գործի փաստական և/կամ իրավական հանգամանքների գնահատման, այլ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման, սահմանադրական նորմերի վերջնական մեկնաբանության և կիրառման հարցեր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Էմմա Թունյանի, Սաշիկ, Գևորգ և Միհրան Սաֆյանների դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

13 ապրիլի 2021 թվականի
ՍԴԱՈ-75